

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
(2010-2015)**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2017**

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58
Ե 813

Խմբագրական խորհուրդ՝

Ա. Յ. Սիմոնյան (նախագահ), Ա. Կ. Գրիգորյան,
Գ. Գ. Գևորգյան, Ռ. Լ. Մարկոսյան,
Ա. Ս. Բուդաղյան, Մ. Գ. Սանթրուքյան
Ա. Ն. Սարգսյան, Ի. Վ. Վարդանյան, Ռ. Գ. Գրիգորյան

Ե 813 Երևանի պետական համալսարանի գործունեության
գնահատման առանցքային ցուցանիշներ (2010-2015: -Եր., ԵՊՀ
հրատ., 2017, 96 էջ:

Սույն ուսումնասիրության նպատակը ԵՊՀ գործունեության արդյունավետության գնահատումն է՝ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմի օգնությամբ: Ներկայացված են ԵՊՀ գործունեության հիմնական վեց ոլորտների ԳԱՑ-երը վերջին հինգ տարիների (2010-2015) համար: Դրանք վեր են հանում ԵՊՀ ձեռքբերումները և բարելավման կարիք ունեցող կողմերը համալսարանի հետագա գործունեությունն ավելի նպատակաուղղված և արդյունավետ կազմակերպելու, զարգացման ռազմավարությունն ուղղորդելու համար:

Հասցեագրվում է ԵՊՀ այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է Համալսարանի և նրա ստորաբաժանումների կառավարմանը և պլանավորմանը:

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58

ISBN 978-5-8084-2201-8

© ԵՊՀ հրատ., 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բնագավառ 1. Ընդունելություն և համակազմ.....	5
Բնագավառ 2. Ուսումնական գործընթաց.....	26
Բնագավառ 3. Ռեսուրսներ և կառավարում.....	42
Բնագավառ 4. Ենթակառուցվածքներ	55
Բնագավառ 5. Գիտություն և նորամուծություն	70
Բնագավառ 6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն	88

Նախաբան

Սույն վերլուծական ուսումնասիրությունը կատարվել է 2016 թվականին՝ ԵՊՀ գործունեության վերջին հինգ տարիների արդյունքները գնահատելու նպատակով:

Համալսարանի համար այդ արդյունքներն ունեն երկակի նշանակություն: Նախ դրանք հիմք են ԵՊՀ գործունեության արդյունավետության գնահատման և ինքնավերլուծության, ինչպես նաև հնգամյա և տարեկան հաշվետվությունների կազմման համար: Մյուս կողմից, դրանք օգտագործվում են համալսարանի ռազմավարական պլանավորման գործընթացում՝ ներքին միջավայրային վերլուծության և հաջորդող SWOT-ի (ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և վտանգների) որոշման համար:

ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) ընդունված լրակազմն անհրաժեշտ է նաև համալսարանի ռազմավարական ծրագրի իրականացման տարբեր փուլերի արդյունքները չափելու և վերլուծելու համար, քանի որ դրանք կոնկրետ են, պարզ և հաշվարկելի: ԳԱՑ-երի առկայությունն ապահովում է ռազմավարական ծրագրի նպատակների, խնդիրների և առանձին գործողությունների գործնականությունն ու ԵՊՀ կապն իր արտաքին և ներքին միջավայրի կարևորագույն տարրերի հետ:

ԳԱՑ-երի օգտագործումը համալսարանին հնարավորություն է տալիս նաև գործունեության հիմնական ոլորտներում համեմատվել «*հասակակից*» այլ բուհերի հետ, ինչպես նաև նախորդ տարիների և ապագայի համար պլանավորված ցուցանիշները:

Ներկայացված ԳԱՑ-երի լրակազմում կան ցուցանիշների 2 տեսակ: Առաջինը չափում է համալսարանի գործունեության հիմնական արդյունքները, որոնց նկատմամբ ԵՊՀ-ն ունի վերահսկողության հնարավորություն: Ցուցանիշների այս խումբը կոչվում է ԵՊՀ գործունեության արդյունքի գնահատման ԳԱՑ-եր: Երկրորդ խումբը գնահատում է այն պայմանները, որոնք անմիջականորեն ազդում են բուհի «*առողջական*» վիճակի և բարեկեցության վրա, որոնց նկատմամբ բուհն ունի փոքր վերահսկողություն կամ ընդհանրապես չունի:

Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ մեթոդաբանությամբ.

ԵՊՀ ԳԱՑ-երի ցանկը կազմելիս նախ որոշվել են Համալսարանի գործունեության 6 հիմնական ոլորտները.

1. Ընդունելություն և համակազմ,
2. Ուսումնական գործընթաց,
3. Ռեսուրսներ և կառավարում,
4. Ենթակառուցվածքներ,
5. Գիտություն և նորամուծություն,
6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն:

Այնուհետև յուրաքանչյուր ոլորտի համար սահմանվել են ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները (ԳԱՑ-երը): ԵՊՀ ԳԱՑ-երի համապարփակ ցանկը բաղկացած է 81 ցուցանիշներից, որոնք դասակարգված են ըստ ԵՊՀ գործունեության հիմնական ոլորտների: Կատարվել է ԳԱՑ-երի ուսումնասիրություն և վերլուծություն վերջին հինգ տարիների (2010-2015 թթ.) համար:

Սույն վերլուծական ուսումնասիրությունը հասցեագրվում է ԵՊՀ և նրա ստորաբաժանումների վարչակազմին և բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է համալսարանի կառավարմանը և պլանավորմանը:



Բնագավառ 1. Ընդունելություն և համակազմ

1.1. Առկա ուսուցմամբ դիմորդների թիվն ըստ կրթական ծրագրերի և ուղղությունների.....	6
1.2. Առկա ուսուցմամբ բակալավրիատի դիմորդների բաժնենասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում	7
1.3. Առկա ուսուցմամբ բակալավրիատի դիմորդների բաժնենասը կենտրոնացված ընդունելության համակարգի հարակից և նմանատիպ մասնագիտությունների դիմորդների հոսքում	8
1.4. Առկա ուսուցմամբ բակալավրիատի դիմորդների բաշխումն ըստ մարզերի	9
1.5. Առկա ուսուցմամբ ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի	10
1.6. Առկա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելության բաժնենասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում.....	11
1.7. Առկա ուսուցմամբ դիմորդների և ընդունվածների թվի հարաբերությունն ըստ կրթական ծրագրերի.....	12
1.8. Առկա ուսուցմամբ բակալավրիատի իգական սեռի հաշվեկշիռը դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքերում	13
1.9. Առկա ուսուցմամբ օտարերկրյա դիմորդների և ընդունվածների թվի հարաբերությունը	14
1.10. Հեռակա ուսուցմամբ դիմորդների և ընդունվածների թվի հարաբերությունը....	15
1.11.1. Առկա ուսուցմամբ ուսանողական համակազմը	16
1.11.2. Հեռակա ուսուցմամբ ուսանողական համակազմը.....	17
1.11.3. Ընդհանուր ուսանողական համակազմն ըստ կրթական ծրագրերի	18
1.12. Առկա ուսուցմամբ մագիստրատուրա և ասպիրանտուրա ընդունվածների և շրջանավարտների հարաբերությունը	19
1.13. Մագիստրոսական և ասպիրանտական համակազմերի հաշվեկշիռն ընդհանուր համակազմում	20
1.14.1. Առկա ուսուցմամբ օտարերկրյա սովորողների համակազմը և հաշվեկշիռն առկա ուսուցման ուսանողական համակազմում	21
1.14.2. Հեռակա ուսուցմամբ օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հեռակա ուսուցման ուսանողական համակազմում	22
1.15. Հեռակա ուսուցմամբ համակազմը և հաշվեկշիռն ընդհանուր ուսանողական համակազմում.....	23
1.16.1. Վճարովի ուսուցման համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի.....	24
1.16.2. Վճարովի ուսուցման համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդհանուր ուսանողական համակազմում ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի.....	25

Ցուցանիշ 1.1. Առկա ուսուցմամբ դիմորդների թիվն ըստ կրթական ծրագրերի և ուղղությունների

	2011	2012	2013	2014	2015
Դիմորդների թիվը	3066	7351	5948	5445	4407
Բակալավրիատ	1028	5411	4081	3723	3568
Հումանիտար և սոց. տնտ.	793	3952	3005	2560	2581
Բնագիտական	235	1459	1076	1163	987
Մագիստրատուրա	1991	1902	1819	1672	791
Հումանիտար և սոց. տնտ.	1361	1363	1272	1126	549
Բնագիտական	630	539	547	546	242
Ասպիրանտուրա	47	38	48	50	48
Հումանիտար և սոց. տնտ.	20	19	28	25	23
Բնագիտական	27	19	20	25	25


2012 թվականից ԵՊՀ բակալավրիատի դիմորդների թիվը նվազել է շուրջ 34%-ով, ինչը պայմանավորված է ինչպես ժողովրդագրական պայմաններով, այնպես էլ առանձին բուհերի և որոշ բուհերում նոր կրթական ծրագրերի ստեղծմամբ, այսպես՝ 2013 թ-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում բացվել է բակալավրի կրթական ծրագիրը, իսկ 2015-ին՝ Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանը: 2011 թ. փոքր ցուցանիշը պայմանավորված է տվյալ տարում հանրակրթական դպրոցների շրջանավարտների բացակայությամբ (11-ամյա կրթական համակարգի ներդրմամբ): 2011-2014 թվականների ընթացքում մագիստրատուրայի դիմորդների թիվը նվազել է 16%-ով, իսկ 2015 թ-ի նման կտրուկ նվազումը պայմանավորված է արդեն իսկ նշված պատճառով: Հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետների դիմորդների թիվը և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում մոտ 2,5 անգամ ավելի է, քան բնագիտական ֆակուլտետներինը: Ի տարբերություն այս երկու կրթական ծրագրերի՝ ասպիրանտուրայի դիմորդների թիվը համեմատաբար կայուն է և տատանվում է 45-50-ի միջակայքում (բացառություն է կազմում միայն 2012 թվականը):



Ցուցանիշ 1.2. Առկա ուսուցմամբ բակալավրիատի դիմորդների բաժնենասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում

	2011	2012	2013	2014	2015
Ընդհանուր դիմորդների թիվը	2649	16155	13058	12406	11732
ԵՊՀ դիմորդների թիվը	1028	5411	4081	3723	3568
ԵՊՀ դիմորդների բաժնենասը	39%	34%	31%	30%	30%


2012-2015 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում նկատելի է դիմորդների ընդհանուր թվի նվազում՝ շուրջ 27%: Նշված ժամանակահատվածում ԵՊՀ առկա ուսուցման համակարգում դիմորդների բաժնենասը հարաբերականորեն կայուն է և կազմում է կենտրոնացված ընդունելության ընդհանուր հոսքի շուրջ 1/3-ը:



Ցուցանիշ 1.3. Առկա ուսուցմամբ բակալավրիատի դիմորդների բաժնենասը կենտրոնացված ընդունելության համակարգի հարակից և նմանատիպ մասնագիտությունների դիմորդների հոսքում

	2011	2012	2013	2014	2015
Նմանատիպ և հարակից մասնագիտությունների դիմորդների թիվը	1734	7573	4948	5196	4679
ԵՊՀ դիմորդների թիվը	829	3763	2523	2480	2441
ԵՊՀ դիմորդների բաժնենասը	48%	50%	51%	48%	52%


2011-2015 թթ. ընթացքում ԵՊՀ բակալավրիատի առկա ուսուցմամբ դիմորդների բաժնենասը կենտրոնացված ընդունելության համակարգի հարակից և նմանատիպ մասնագիտությունների դիմորդների հոսքում գրեթե անփոփոխ է և կազմում է շուրջ 50 տոկոս:



Ցուցանիշ 1.4. Առկա ուսուցմամբ բակալավրիատի դիմորդների բաշխումն ըստ մարզերի

	2011		2012		2013		2014		2015	
Երևան	501	48.7	2367	43.7	1767	43.3	1521	40.9	1436	40.2
Կոտայք	75	7.3	463	8.6	362	8.9	332	8.9	305	8.5
Գեղարքունիք	45	4.4	429	7.9	322	7.9	316	8.5	265	7.4
Արարատ	64	6.2	387	7.2	274	6.7	247	6.6	262	7.3
Արմավիր	62	6.0	381	7.0	254	6.2	283	7.6	257	7.2
Արագածոտն	55	5.4	278	5.1	216	5.3	209	5.6	209	5.9
Շիրակ	52	5.1	306	5.7	233	5.7	221	5.9	200	5.6
Լոռի	31	3.0	267	4.9	211	5.2	177	4.8	190	5.3
Սյունիք	18	1.8	226	4.2	182	4.5	169	4.5	171	4.8
Տավուշ	16	1.6	167	3.1	155	3.8	142	3.8	123	3.5
Վայոց ձոր	28	2.7	115	2.1	74	1.8	58	1.6	69	2.0
Այլ երկրներից	81	7.9	25	0.5	31	0.8	48	1.3	81	2.3
Ընդամենը	1028		5411		4081		3723		3568	


2012-2015 տարիների ընթացքում նկատելի է հանրապետության մարզերից դիմորդների թվի աճ, ըստ այդմ եՊՀ դիմորդների շուրջ 60%-ը մարզերից են, առաջատարներն են Կոտայքը, Գեղարքունիքը, Արարատը և Արմավիրը, իսկ 40%-ը Երևանից են:



Ցուցանիշ 1.5. Առկա ուսուցմամբ ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

	2011	2012	2013	2014	2015
Ընդունվածների թիվը	2230	5040	4845	4529	3752
Բակալավրիատ	725	3611	3414	3224	3060
Անվճար	264	410	408	408	411
Վճարովի	461	3201	3006	2816	2649
Մագիստրատուրա	1466	1399	1395	1268	655
Անվճար	404	451	458	455	421
Վճարովի	1062	948	937	813	243
Ասպիրանտուրա	39	30	36	37	37
Անվճար	39	30	36	37	37
Վճարովի	0	0	0	0	0


Վերջին չորս տարիներին բակալավրիատ ընդունվածների թիվը նվազել է 15%-ով և 2015-ին կազմել է շուրջ 3000 (2011 թ-ի ընդունելության փոքր ցուցանիշը պայմանավորված է արդեն իսկ նշված պատճառներով): 2011 թվականի համեմատ 2014-ին մագիստրատուրա ընդունվածների թիվը նվազել է 13.5%-ով: 2011-2015 թվականներին ասպիրանտուրայում ընդունելության ցուցանիշը տատանվում է 30-39-ի սահմաններում, ինչը պայմանավորված է ընդունելության տեղերի սահմանափակ քանակով:



Ցուցանիշ 1.6. Առկա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելության բաժնենասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում

	2011	2012	2013	2014	2015
Կենտրոնացված ընդունելության ծավալը	1672	12544	10886	10116	9927
ԵՊՀ ընդունվածների թիվը	725	3611	3414	3224	3060
ԵՊՀ ընդունելության բաժնենասը	43%	29%	31%	32%	31%


Կենտրոնացված ընդունելության ծավալը 2015 թվականին 2012-ի համեմատ նվազել է շուրջ 20%-ով: Նշված ժամանակահատվածում ԵՊՀ ընդունելության բաժնենասը բավական կայուն է և կազմում է կենտրոնացված ընդունելության բաժնենասի շուրջ 1/3-ը:



Ցուցանիշ 1.7. Առկա ուսուցմամբ դիմորդների և ընդունվածների թվի հարաբերությունն ըստ կրթական ծրագրերի

	2011	2012	2013	2014	2015
Բակալավրիատի դիմորդների թիվը	1028	5411	4081	3723	3568
Ընդունվածների թիվը	725	3611	3414	3224	3060
Հարաբերությունը (բակալավրիատ)	1.42	1.50	1.20	1.15	1.17
Մագիստրատուրայի դիմորդների թիվը	1991	1902	1819	1672	791
Ընդունվածների թիվը	1466	1404	1395	1268	655
Հարաբերությունը (մագիստրատուրա)	1.36	1.35	1.30	1.32	1.21
Ասպիրանտուրայի դիմորդների թիվը	47	38	48	50	48
Ընդունվածների թիվը	39	30	36	37	37
Հարաբերությունը (ասպիրանտուրա)	1.21	1.27	1.33	1.35	1.30


2012-2015 տարիների ընթացքում մրցութային ցուցանիշն ըստ կրթական ծրագրերի նվազել է. բակալավրիատում 1,50-ից՝ 1,17, իսկ մագիստրատուրայում՝ 1,36-ից՝ 1,32: Ասպիրանտուրայում այս ցուցանիշը համեմատաբար կայուն է և կազմում է շուրջ 1,30:



Ցուցանիշ 1.8. Առկա ուսուցմամբ բակալավրիատի իգական սեռի հաշվեկշիռը դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքերում

	2011	2012	2013	2014	2015
Դիմորդների թիվը	1028	5411	4081	3723	3568
Իգական սեռի դիմորդների թիվը	578	3543	2738	2471	2363
Իգական սեռի դիմորդների հաշվեկշիռը	56%	65%	67%	66%	66%
Ընդունվածների թիվը	725	3611	3414	3224	3060
Իգական սեռի ընդունվածների թիվը	420	2379	2305	2073	2048
Իգական սեռի ընդունվածների հաշվեկշիռը	58%	66%	68%	64%	67%


2012-2015 թվականների ընթացքում ԵՊՀ դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքերում իգական սեռի հաշվեկշիռը հաստատուն է և կազմում է շուրջ 2/3-ը:



Ցուցանիշ 1.9. Առկա ուսուցման օտարերկրյա* դիմորդների և ընդունվածների թվի հարաբերությունը

	2011	2012	2013	2014	2015
Բակալավրիատի դիմորդների թիվը	97	82	117	72	67
Ընդունվածների թիվը	74	65	90	56	51
Մագիստրատուրայի դիմորդների թիվը	49	21	37	43	20
Ընդունվածների թիվը	41	14	29	38	18
Ասպիրանտուրայի դիմորդների թիվը	29	27	6	19	9
Ընդունվածների թիվը	23	23	4	15	5
Դիմորդների ընդհանուր թիվը	175	130	160	134	96
Ընդունվածների ընդհանուր թիվը	138	102	123	109	74
Հարաբերությունը	1.27	1.27	1.30	1.23	1.30

2011-2015 թվականների ընթացքում բոլոր երեք կրթական ծրագրերում արձանագրվել է օտարերկրյա դիմորդների թվի նվազում՝ բակալավրիատում՝ 31, մագիստրատուրայում՝ 59, իսկ ասպիրանտուրայում՝ մոտ 70%: Ըստ այդմ, դիմորդների ընդհանուր թիվը նվազել է 45%-ով: Նշված ժամանակահատվածում մրցութային ցուցանիշը տատանվում է 1,23-1,30-ի միջակայքում:




* Բոլոր ցուցանիշներում օտարերկրյա քաղաքացիները ներկայացված են որպես ոչ կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդներ և ընդունվածներ (այն է՝ հարցազրույց, նախապատրաստական դասընթացներ և այլն):

Ցուցանիշ 1.10. Հեռակա ուսուցմամբ դիմորդների և ընդունվածների թվի հարաբերությունը

	2011	2012	2013	2014	2015
Բակալավրիատի դիմորդների թիվը	600	1058	697	603	522
Ընդունվածների թիվը	459	971	650	523	437
Հարաբերությունը (բակալավրիատ)	1.31	1.09	1.07	1.15	1.19
Մագիստրատուրայի դիմորդների թիվը	598	703	611	500	235
Ընդունվածների թիվը	388	507	510	353	190
Հարաբերությունը (մագիստրատուրա)	1.54	1.39	1.20	1.42	1.24
Ասպիրանտուրայի դիմորդների թիվը	74	98	101	67	70
Ընդունվածների թիվը	74	83	86	56	63
Հարաբերությունը (ասպիրանտուրա)	1.00	1.18	1.17	1.20	1.11


2012-2015 թվականների ընթացքում հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատի դիմորդների թիվը նվազել է ավելի քան 50, իսկ 2011-2014 թթ.-ին մագիստրատուրայի դիմորդների՝ 16 տոկոսով: 2011-2015 թթ.-ին ասպիրանտուրայի դիմորդների թիվը տատանվել է 70-100-ի միջակայքում: Ըստ այդմ, մրցութային ցուցանիշը բակալավրիատում գտնվում է 1,1-1,2-ի, մագիստրատուրայում՝ 1,2-1,5-ի և ասպիրանտուրայում՝ 1,1-1,2-ի միջակայքում:



Ցուցանիշ 1.11.1. Առկա ուսուցմամբ ուսանողական համակազմը

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Առկա ուսուցման ուսանողական համակազմը	14467	11895	12524	12562	12788
Բակալավրիատ	11235	8722	9167	9445	9857
Հումանիտար և սոց. տնտ.	7597	5924	6310	6647	6877
Բնագիտական	3638	2798	2857	2798	2980
Մագիստրատուրա	2538	2644	2789	2630	2428
Հումանիտար և սոց. տնտ.	1795	1949	2037	1869	1709
Բնագիտական	743	695	752	761	719
Ասպիրանտուրա	132	121	98	109	102
Հումանիտար և սոց. տնտ.	65	60	49	61	54
Բնագիտական	67	61	49	48	48
Օտարերկրյա ուսանողական համակազմը	562	408	470	378	401


2014/15 ուսումնական տարում առկա ուսուցմամբ ուսանողական համակազմը 2010/11-ի համեմատ նվազել է շուրջ 12%-ով (ինչը պայմանավորված է արդեն իսկ նշված պատճառներով): Ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում ուսանողների ավելի քան 2/3-ը սովորում է հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետներում: Ասպիրանտուրայում ևս նկատելի է սովորողների թվի որոշակի նվազում՝ 132-ից՝ 102: 2010/11-2014/15 ուստարիներին շուրջ 30%-ով նվազել է նաև օտարերկրյա ուսանողների համակազմը:



Ցուցանիշ 1.11.2. Հեռակա ուսուցմամբ ուսանողական համակազմը

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Հեռակա ուսուցմամբ ուսանողական համակազմը	3745	4530	5418	5577	5145
Բակալավրիատ	3134	3455	3943	3902	3538
Հումանիտար և սոց. տնտ.	2607	2751	3117	3065	2736
Բնագիտական	527	704	826	837	802
Մագիստրատուրա	376	787	1136	1299	1274
Հումանիտար և սոց. տնտ.	376	787	1113	1257	1217
Բնագիտական	0	0	23	42	57
Ասպիրանտուրա	178	212	266	313	300
Հումանիտար և սոց. տնտ.	118	142	184	228	219
Բնագիտական	60	70	82	85	81
Օտարերկրյա ուսանողական համակազմը	57	76	73	63	33


2010/11-2013/14 ուստարիներին հեռակա ուսուցման համակազմն աճել է 49%-ով: Բակալավրիատում այդ աճը կազմել է շուրջ 25%: 2010/11-2014/15 ուստարիների ընթացքում բակալավրիատի հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական ուղղություններում սովորում է ուսանողների շուրջ 3/5-ը, իսկ բնագիտականում՝ 1/5-ը: Մագիստրատուրայում հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական ուղղություններում ներգրավված է ուսանողների գրեթե 98 տոկոսը: Նշված ժամանակահատվածում ասպիրանտուրայի համակազմն ավելացել է մոտ 2 անգամ, իսկ օտարերկրյա ուսանողական համակազմը նվազել է շուրջ 11 տոկոսով: 2014/15 ուստարվանից բոլոր կրթական ծրագրերում նկատելի է սովորողների թվի որոշակի նվազում:



Ցուցանիշ 1.11.3. Ընդհանուր ուսանողական համակազմն ըստ կրթական ծրագրերի

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Ընդհանուր ուսանողական համակազմը	18212	16425	17912	18139	17933
Բակալավրիատ	14369	12177	13080	13347	13395
Առկա ուսուցում	11235	8722	9137	9445	9857
Հեռակա ուսուցում	3134	3455	3943	3902	3538
Մագիստրատուրա	2914	3431	3925	3929	3702
Առկա ուսուցում	2538	2644	2789	2630	2428
Հեռակա ուսուցում	376	787	1136	1299	1274
Ասպիրանտուրա	310	333	364	422	402
Առկա ուսուցում	132	121	98	109	102
Հեռակա ուսուցում	178	212	266	313	300
Օտարերկրյա ուսանողական համակազմը	619	484	543	441	434


ԵՊՀ հիմնական ուսանողական համակազմի ընդհանուր թվաքանակը 2010/11-2014/15 ուստարիների ընթացքում շուրջ տասնութ հազար է: Բակալավրի կրթական ծրագրում ներգրավված է ընդհանուր ուսանողական համակազմի շուրջ 75, մագիստրատուրայում՝ 21, իսկ ասպիրանտուրայում՝ 2 տոկոսը: Օտարերկրյա ուսանողական համակազմը կազմում է ընդհանուրի ավելի քան 2 տոկոսը:



Ցուցանիշ 1.12. Առկա ուսուցմամբ մագիստրատուրա և ասպիրանտուրա ընդունվածների և շրջանավարտների հարաբերությունը

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Բակալավրիատի շրջանավարտներ	2728	2664	2767	2424	834
Մագիստրատուրա ընդունված ուսանողներ	1466	1399	1395	1268	655
Հարաբերությունը (%)	53.7	52.5	50.4	52.3	78.5
Մագիստրատուրայի շրջանավարտներ	1209	1199	1401	1339	1263
Ասպիրանտուրա ընդունվածներ	39	30	36	36	37
Հարաբերությունը (%)	3.2	2.5	2.6	2.7	2.9


2010/11-2013/14 ուստարիներին բակալավրիատի շրջանավարտների և մագիստրատուրա ընդունված ուսանողների հարաբերության ցուցանիշը կայուն է և գտնվում է 50-54%-ի միջակայքում, բացառություն է կազմում 2014/15 ուստարին՝ 78,5%, որը պայմանավորված է բակալավրիատի շրջանավարտների փոքր թվով: 2010/11-2014/15 ուստարիներին՝ մագիստրատուրայի շրջանավարտների և ասպիրանտուրա ընդունվածների հարաբերությունը կազմում է շուրջ 3%:



Ցուցանիշ 1.13. Մագիստրոսական և ասպիրանտական համակազմերի հաշվեկշիռն ընդհանուր համակազմում

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Ընդհանուր ուսանողական համակազմը	18212	16425	17912	18139	17933
Մագիստրոսական համակազմը	2914	3431	3925	3929	3702
Մագիստրատուրայի հաշվեկշիռը (%)	16.00	20.89	21.91	21.66	20.64
Ասպիրանտական համակազմը	310	333	364	422	402
Ասպիրանտուրայի հաշվեկշիռը (%)	1.70	2.03	2.03	2.33	2.24


2010/11-2014/15 ուստարիներին մագիստրոսական համակազմը կազմում է ընդհանուր ուսանողական համակազմի շուրջ 20, իսկ ասպիրանտականը՝ ավելի քան 2 տոկոսը:



Ցուցանիշ 1.14.1. Առկա ուսուցմամբ օտարերկրյա սովորողների համակազմը և հաշվեկշիռն առկա ուսուցման ուսանողական համակազմում

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Առկա ուսուցման ուսանողական համակազմը	14467	11895	12524	12562	12788
Օտարերկրյա ուսանողների համակազմը, այդ թվում՝	521	379	415	344	341
Բակալավրիատ	243	227	273	253	247
Մագիստրատուրա	34	45	80	54	57
Ասպիրանտուրա	244	107	62	37	37
Օտարերկրյա սովորողների հաշվեկշիռն ընդհանուր համակազմում (%)	3.60	3.19	3.31	2.74	2.67


2010/11-2014/15 ուստարիներին առկա ուսուցման ուսանողական համակազմում նկատելի է օտարերկրյա սովորողների հաշվեկշիռի նվազում՝ 3,6-ից 2,7 տոկոս, որի պատճառը ասպիրանտների թվի կտրուկ նվազումն է:



Ցուցանիշ 1.14.2. Հեռակա ուսուցմամբ օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հեռակա ուսուցման ուսանողական համակազմում

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Հեռակա ուսուցմամբ ուսանողական համակազմը	3745	4530	5418	5577	5145
Օտարերկրյա ուսանողների համակազմը, այդ թվում՝	57	76	73	63	49
Բակալավրիատ	51	59	49	39	33
Մագիստրատուրա	6	17	24	24	16
Ասպիրանտուրա	0	0	0	0	0
Օտարերկրյա ուսանողների հաշվեկշիռը ընդհանուր համակազմում (%)	1.52	1.68	1.35	1.13	0.95


2014/15 ուստարում օտարերկրյա ուսանողների համակազմը 2010/11-ի համեմատ նվազել է 14%-ով և կազմում է հեռակա ուսուցման ուսանողական համակազմի շուրջ 1 տոկոսը:



Ցուցանիշ 1.15. Հեռակա ուսուցմամբ համակազմը և հաշվեկշիռն ընդհանուր ուսանողական համակազմում

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Ընդհանուր ուսանողական համակազմը	18212	16425	17912	18139	17933
Հեռակա ուսուցման ուսանողական համակազմը	3688	4454	5345	5577	5145
Հեռակա ուսուցման հաշվեկշիռն ընդհանուր համակազմում (%)	20.3	27.1	29.8	30.7	28.7


2010/11-2013/14 ուստարիների ընթացքում հեռակա ուսուցման ուսանողական համակազմն աճել է 51%-ով և 2013/14-ին կազմել ընդհանուր ուսանողական համակազմի շուրջ 31%-ը: Սակայն 2014/15 ուստարվանից արդեն իսկ նկատելի է նվազման միտում:



Ցուցանիշ 1.16.1. Վճարովի ուսուցմամբ համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Ընդունելության ընդհանուր ծավալը	5703	3274	6669	6155	5542
Բակալավրիատ (վճարովի համակարգ)	3497	920	4172	3656	3339
Առկա	2561	461	3201	3006	2816
Հեռակա	936	459	971	650	523
Մագիստրատուրա (վճարովի համակարգ)	1178	1450	1455	1447	1166
Առկա	915	1062	948	937	813
Հեռակա	263	388	507	510	353
Ասպիրանտուրա (վճարովի համակարգ)	1	0	0	9	7
Առկա	0	0	0	0	0
Հեռակա	1	0	0	9	7
Օտարերկրյա քաղաքացիներ	134	197	151	141	130
Ընդամենը վճարովի	4810	2567	5778	5253	4642
Հաշվեկշիռն ընդունելության ծավալում (%)	84	78	87	85	84


2010/11-2014/15 ուստարիների ընթացքում ընդունելության ընդհանուր ծավալում վճարովի համակարգ ընդունված ուսանողների հաշվեկշիռը կազմում է շուրջ 85 տոկոս:



Ցուցանիշ 1.16.2. Վճարովի ուսուցմամբ համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդհանուր ուսանողական համակազմում ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Ընդհանուր ուսանողական համակազմը	18212	16425	17912	18139	17933
Բակալավրիատ	11223	9678	11173	11749	11870
Առկա	8156	6302	7316	7923	8391
Հեռակա	3067	3376	3857	3826	3479
Մագիստրատուրա	2054	2499	2943	2982	2737
Առկա	1681	1722	1826	1709	1486
Հեռակա	373	777	1117	1273	1251
Ասպիրանտուրա	2	1	5	9	7
Առկա	0	0	0	0	0
Հեռակա	2	1	5	9	7
Օտարերկրյա քաղաքացիներ	575	466	524	397	369
Ընդամենը վճարովի	13854	12644	14645	15137	14983
Հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	76	77	82	83	84

Վերջին հինգ ուստարիներին վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ավելացել է շուրջ 8 տոկոսով և 2014/15 ուստարում կազմել ընդհանուր ուսանողական համակազմի 84%-ը:




Բնագավառ 2. Ուսումնական գործընթաց

2.1. Առկա ուսուցման համակարգում առաջին կուրսից երկրորդ կուրս անցումն ըստ կրթական ծրագրերի	27
2.2. Շրջանավարտներն ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի	28
2.3. Հիմնական դասախոսական կազմը	29
2.4. Դասախոսական կազմի բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)	30
2.5. Դասախոսական կազմի տարեկան համալրումը	31
2.6. Դասախոսական հաստիքների և ընդհանուր դասախոսական կազմի հարաբերակցությունը	32
2.7. Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը	33
2.8. Որակավորման բարձրացման ծրագրերին մասնակցած հիմնական դասախոսների թվի և հիմնական դասախոսական կազմի հարաբերակցությունը	34
2.9. Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը հիմնական դասախոսական կազմում	35
2.10. Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերակցությունը ..	36
2.11. Ընդհանուր ուսանողական համակազմի և ուսումնաօժանդակ կազմի հարաբերակցությունը	37
2.12. Դասախոսի տարեկան ուսումնական միջին բեռնվածությունն ըստ ուղղությունների.....	38
2.13. 100 դասախոսին բաժին ընկնող ուսումնամեթոդական հրատարակությունների թիվը	39
2.14. Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշն ըստ կրթական ծրագրերի և ուղղությունների.....	40
2.15. Ուսանողական հարցման միջին գնահատականներն ըստ ուղղությունների.....	41

Ցուցանիշ 2.1. Առկա ուսուցման համակարգում առաջին կուրսից երկրորդ կուրս անցումն ըստ կրթական ծրագրերի

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Բակալավրիատ (%)	91.67	88.75	90.1	91.45	93.44
Մագիստրատուրա (%)	93.71	95.7	95.91	96.12	95.23


2010/11-2014/15 ուստարիներին բակալավրիատում առաջինից երկրորդ կուրս անցումը կազմում է 90-93% (բացառություն են կազմում միայն 2011/12-2012/13 ուստարիները՝ արդեն իսկ նշված պատճառներով, տես աղյուսակ 1.1): Մագիստրատուրայում այդ անցումը տատանվում է 94-96%-ի միջակայքում:



Ցուցանիշ 2.2. Շրջանավարտներն ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի

	2011	2012	2013	2014	2015
Շրջանավարտների թիվը	4026	4547	5141	4952	3384
Բակալավրիատ	2728	3153	3429	3178	1603
Առկա ուսուցում	2728	2664	2767	2424	834
Հեռակա ուսուցում	0	489	662	754	769
Մագիստրատուրա	1209	1314	1642	1696	1712
Առկա ուսուցում	1209	1199	1401	1339	1263
Հեռակա ուսուցում	0	115	241	357	449
Ասպիրանտուրա	89	80	70	78	69
Առկա ուսուցում	49	51	32	38	29
Հեռակա ուսուցում	40	29	38	40	40


2015 թվականին նկատելի է շրջանավարտների ընդհանուր թվի նվազում, ինչը պայմանավորված է 2011-ին բակալավրիատի ընդունելության ծավալների նվազմամբ: Մագիստրատուրայում 2011-2015 տարիների ընթացքում արժանագրվել է շրջանավարտների թվի շուրջ 42% աճ պայմանավորված հեռակա ուսուցման համակարգի ներդրմամբ: Նշված ժամանակահատվածում ասպիրանտուրայում նկատելի է շրջանավարտների թվի որոշակի նվազում շուրջ 20%:



Ցուցանիշ 2.3. Հիմնական դասախոսական կազմը

	2010/11		2011/12		2012/13		2013/14		2014/15	
Պրոֆեսոր	161	12,6%	166	13,1%	162	13,0%	162	12,6%	174	13,9%
Դոցենտ	451	35,5%	461	36,4%	474	37,0%	491	38,1%	485	38,6%
Ասիստենտ և դասախոս	658	51,9%	639	50,5%	643	50,0%	635	49,3%	596	47,5%
Ընդամենը	1270		1266		1279		1288		1255	
Այդ թվում՝ գիտ. աստիճանով	829	65,2%	844	66,7%	837	65,4%	854	66,3%	852	67,8%


Վերջին հինգ ուստարիներին հիմնական դասախոսական կազմում նկատվում է գիտական աստիճան ունեցող դասախոսների թվի որոշակի աճ: Նշված ժամանակահատվածում պրոֆեսորները և դոցենտները կազմում են հիմնական դասախոսական կազմի 50 տոկոսից ավելին:



Ցուցանիշ 2.4. Դասախոսական կազմի բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)

	2010/11		2011/12		2012/13		2013/14		2014/15	
Հիմնական և համատեղություն	1570	80,3%	1579	92,2%	1496	89,2%	1528	88,5%	1618	90,4%
Ժամավճար	384	19,7%	133	7,8%	182	10,8%	199	11,5%	171	9,6%
Ընդամենը	1954		1712		1678		1727		1789	


Հիմնական և համատեղությամբ դասավանդող դասախոսների թիվը վերջին հինգ ուստարիներին հարաբերականորեն կայուն է և տատանվում է 1500-1600-ի սահմաններում: Նույն ժամանակահատվածում կրկնակի նվազել է ժամավճարային հիմունքներով դասավանդողների թիվը:



Ցուցանիշ 2.5. Դասախոսական կազմի տարեկան համալրումը

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Դասախոսական կազմի տարեկան համալրումը	36	30	32	26	25
Այդ թվում՝ ասպիրանտուրայից	5	7	3	5	3


2010/11-2014/15 ուստարիներին նկատելի է դասախոսական կազմի համալրման աստիճանական նվազում՝ 36-ից 25: Բավական ցածր է նաև ասպիրանտուրայից տարեկան համալրման ցուցանիշը:



Ցուցանիշ 2.6. Դասախոսական հաստիքների և ընդհանուր դասախոսական կազմի հարաբերակցությունը

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Ընդհանուր դասախոսական կազմ	1954	1712	1678	1727	1789
Դասախոսական հաստիքներ	1355	1357	1315	1382	1312
Հարաբերակցությունը	0.69	0.79	0.78	0.80	0.73


Վերջին հինգ ուստարիների ընթացքում դասախոսական հաստիքների օգտագործման գործակիցը կազմել է 0,7-0,8: Այս ցուցանիշը դեռևս բարելավման կարիք ունի:



Ցուցանիշ 2.7. Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Մինչև 35 տարեկան	297	272	274	224	229
35-65 տարեկան	750	758	768	821	786
65-ից բարձր	223	236	237	243	240
Ընդամենը	1270	1266	1279	1288	1255
Միջին տարիք	50.4	50.4	50.5	50.6	50.4


Հիմնական դասախոսական կազմում գերակշռում են միջին տարիքի (35-65 տարեկան) դասախոսները: 2013/14-2014/15 ուստարիներին 65-ից բարձր տարիք ունեցող դասախոսների թիվը գերազանցում է մինչև 35 տարեկաններին: Ըստ այդմ, հիմնական դասախոսական կազմում երիտասարդ դասախոսների հաշվեկշիռը 20 տոկոսից ցածր է:



Ցուցանիշ 2.8. Որակավորման բարձրացման ծրագրերին մասնակցած հիմնական դասախոսների թվի և հիմնական դասախոսական կազմի հարաբերակցությունը

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Հիմնական դասախոսական կազմ	1270	1266	1279	1288	1255
Որակավորման բարձրացում անցած հիմնական դասախոսների թիվը	158	537	517	754	766
Հարաբերակցությունը	12.4	42.4	40.4	58.5	61.0


ԵՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումը կրում է պլանավորված և շարունակական բնույթ: 2011/12 ուստարվանից դասախոսների վերապատրաստման ծրագիրն իրականացվում է կրեդիտային համակարգով՝ գործընթացն ավելի կազմակերպված և համակարգված դարձնելու նպատակով: Վերջին հինգ ուստարիներին որակավորման ծրագրերին մասնակցած դասախոսների թիվը զգալիորեն աճել է և 2013/14-2014/15 ուստարիներին կազմել հիմնական դասախոսական կազմի շուրջ 60 տոկոսը:



Ցուցանիշ 2.9. Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը հիմնական դասախոսական կազմում

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Հիմնական դասախոսական կազմը	1270	1266	1279	1288	1255
Իգական սեռի հիմնական դասախոսների թիվը	685	681	709	725	710
Իգական սեռի հաշվեկշիռը (%)	54	54	55	56	57


2010/11-2014/15 ուստարիներին հիմնական դասախոսական կազմում իգական սեռի դասախոսների հաշվեկշիռն աճել է 54-ից 57 տոկոս:



Ցուցանիշ 2.10. Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերակցությունը

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Ընդհանուր ուսանողական համակազմը	18212	16425	17912	18139	17933
Դասախոսական հաստիքներ	1355	1357	1315	1382	1312
Ուսանող/դասախոս հարաբերակցությունը	12.0	11.2	12.8	13.0	13.5


2010/11-2014/15 ուստարիներին, պայմանավորված նաև հեռակա ուսուցման համակարգի իրողությամբ, նկատելի է ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերակցության որոշակի աճ՝ 12-13,5 (բացառություն է կազմում միայն 2011/12 ուստարին՝ արդեն իսկ նշված պատճառներով, տե՛ս աղյուսակ 1.1):



Ցուցանիշ 2.11. Ընդհանուր ուսանողական համակազմի և ուսումնաօժանդակ կազմի հարաբերակցությունը

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Ընդհանուր ուսանողական համակազմը	18212	16425	17912	18139	17933
Ուսումնաօժանդակ կազմը	464	449	431	424	383
Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը	39.3	36.6	41.6	42.8	46.8


Վերջին հինգ ուստարիներին ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը տարեցտարի աճել է և 2014/15 ուստարում կազմել՝ 46.8:



Ցուցանիշ 2.12. Դասախոսի տարեկան ուսումնական միջին բեռնվածությունն ըստ ուղղությունների

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Բնագիտական	705	717	705	693	686
Հումանիտար և սոց. տնտ.	706	737	731	719	713
Համահամալսարանական ամբիոններ	758	719	724	836	810
Համալսարանական միջին բեռնվածություն	708	730	723	714	708


2010/11-2014/15 ուստարիներին դասախոսների միջին տարեկան բեռնվածությունը կազմել է շուրջ 710 ժամ: 2013/14-2014/15 ուստարիներին և՛ բնագիտական, և՛ հումանիտար ուղղություններում նկատելի է միջին տարեկան ծանրաբեռնվածության նվազում:



Ցուցանիշ 2.13. 100 դասախոսին բաժին ընկնող ուսումնամեթոդական հրատարակությունների թիվը

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Ուսումնամեթոդական նյութերի քանակը	184	162	159	176	155
Հիմնական դասախոսական կազմը	1270	1266	1279	1288	1255
100 դասախոսին բաժին ընկնող ուսումնամեթոդական հրատարակությունների թիվը	14.5	12.8	12.4	13.7	12.4


2010/11-2014/15 ուստարիների ընթացքում հարյուր դասախոսին բաժին ընկնող ուսումնամեթոդական հրատարակությունների թիվը տատանվում է 12-14-ի սահմաններում:



Ցուցանիշ 2.14. Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշն ըստ կրթական ծրագրերի և ուղղությունների

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Բակալավրիատ (%)	66	68	68	64	64
Բնագիտական (բակ.)	57	61	62	57	60
Հումանիտար և սոց. տնտ. (բակ.)	75	74	74	71	67
Մագիստրատուրա (%)	94	94	95	94	93
Բնագիտական (մագ.)	93	95	96	95	93
Հումանիտար և սոց. տնտ. (մագ.)	94	93	93	93	93


2010/11-2014/15 ուստարիներին առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը բակալավրիատի հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտություններում արձանագրել է որոշակի նվազում 75-ից 67 %, իսկ բնագիտականում այն տատանվում է 57-62 %-ի սահմաններում: Մագիստրատուրայում այս ցուցանիշն ավելի բարձր է և երկու ուղղություններում գտնվում է 93-96 %-ի տիրույթում:



Ցուցանիշ 2.15. Ուսանողական հարցման միջին գնահատականներն ըստ ուղղությունների

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Բնագիտական	4.47	4.57	4.52	4.51	4.51
Հումանիտար և սոց. տնտ.	4.49	4.51	4.52	4.52	4.51
Համահամալսարանական ամբիոններ	4.65	4.65	4.62	4.55	4.55
ԵՊՀ միջին գնահատականը	4.49	4.54	4.52	4.52	4.51

ԵՊՀ-ում ուսումնական գործընթացի շարունակական բարելավման նպատակով՝ դեռևս 2002 թ-ին ներդրվեց դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների համակարգը: Ուսանողների կողմից դասախոսական կազմի գնահատման մեխանիզմի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ հարցման մեթոդաբանությունը, ընթացակարգը և չափանիշները պարբերաբար լրամշակվում և կատարելագործվում են: 2010/11-2014/15 ուստարիներին ուսանողական հարցման միջին գնահատականը կազմել է 4,5 միավոր:




Բնագավառ 3. Ռեսուրսներ և կառավարում

3.1. Աշխատողների ընդհանուր հաստիքների թիվը, ուսանող/աշխատող հարաբերակցությունը	43
3.2. Դասախոսական կազմ/ոչ դասախոսական կազմ (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերակցությունը	44
3.3. Տարեկան եկամուտներ (հզ. դր.)	45
3.4. Եկամուտներ/ուսանող և ծախսեր/ուսանող հարաբերակցությունները (հզ. դր.) ..	46
3.5. Դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին և տարեվերջին (հզ. դր.)	47
3.6. ՀՀ պետական բյուջեից ստացված եկամուտների և ոչ պետական պատվերով եկամուտների հարաբերությունն ընդհանուր եկամուտներին (հզ. դր.)	48
3.7. Ուսումնական ծախսերի հաշվեկշիռն ընդհանուր ծախսերում և մեկ ուսանողին բաժին ընկնող ուսումնական ծախսերը	50
3.8. Ուսման միջին վարձաչափը (հզ. դր.)	51
3.9. Դասախոսական կազմի միջին աշխատավարձը և հարաբերությունը ՀՀ միջին աշխատավարձին	52
3.10. Աշխատավարձ և սոցիալական վճարներ/տարեկան ընդհանուր ծախսեր հարաբերակցությունը (հզ.դր.)	53
3.11. Հարկերի ծավալ/եկամուտներ պետական բյուջեից հարաբերակցությունը (հզ.դր.)	54

Ցուցանիշ 3.1. Աշխատողների ընդհանուր հաստիքների թիվը, ուսանող/աշխատող հարաբերակցությունը

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Աշխատողների ընդհանուր հաստիքների թիվը	2919	2950	2839	2824	2654
Ընդհանուր ուսանողական համակազմը	18212	16425	17912	18139	17933
Ուսանող/աշխատող հարաբերակցությունը	6.2	5.6	6.3	6.4	6.8


2010/11-2014/15 ուստարիների ընթացքում աշխատողների ընդհանուր հաստիքների (ներառված է նաև ժամավճարը) թիվը նվազել է ավելի քան 9%-ով: Նշված ժամանակահատվածում ընդհանուր ուսանողական համակազմի թվաքանակը կայուն է (բացառությամբ՝ 2011/12 ուստարվա), իսկ ուսանող/աշխատող հարաբերակցությունն աճել է 6.2-ից 6.8:



Ցուցանիշ 3.2. Դասախոսական կազմ/ոչ դասախոսական կազմ (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերակցությունը

	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Դասախոսական հաստիքներ	1355	1357	1315	1382	1312
Ոչ դասախոսական հաստիքներ	1564	1593	1524	1442	1342
Դասախոսական կազմ/ ոչ դասախոսական կազմ հարաբերակցությունը	0.87	0.85	0.86	0.96	0.98


2010/11-2014/15 ուստարիների ընթացքում դասախոսական կազմ/ոչ դասախոսական կազմ հարաբերակցությունն աճել է 0.85-ից 0.98:



Ցուցանիշ 3.3. Տարեկան եկամուտներ (հզ. դր.)

	2011	2012	2013	2014	2015
Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայություններից	4,841,101	4,790,537	5,510,012	5,954,250	6,445,813
Եկամուտներ պետական բյուջեից	2,014,910	1,839,694	1,996,412	2,580,108	2,740,679
Այլ եկամուտներ*	534,417	828,186	950,447	1,271,512	3,095,666
Ընդամենը տարեկան եկամուտներ	7,390,427	7,458,417	8,456,871	9,805,870	12,282,158

2015 թվականին 2011-ի համեմատ՝ վճարովի ուսուցման համակարգի ծառայություններից եկամուտներն աճել են 33%-ով, իսկ պետական բյուջեից՝ 36%-ով: Նշված ժամանակահատվածում 66%-ով աճել են նաև ընդհանուր տարեկան եկամուտները (արդեն իսկ նշված պատճառով):




* 2015 թվականի եկամուտների աճը պայմանավորված է ԵՊՀ հյուրերի տան վաճառքով, որից ստացված եկամուտներն ուղղվել են ԵՊՀ մարզահամալիրի կառուցմանը:

Ցուցանիշ 3.4. Եկամուտներ/ուսանող և ծախսեր/ուսանող հարաբերակցությունները (հզ. դր.)

	2011	2012	2013	2014	2015
Եկամուտներ	7,390,427	7,458,417	8,456,871	9,805,870	12,282,158
Ընդհանուր ուսանողական համակազմը	18212	16425	17912	18139	17933
Եկամուտներ/ուսանող հարաբերակցությունը	405.8	454.1	472.1	540.6	684.9
Ծախսեր	7,387,624	7,446,263	8,426,293	9,640,536	11,749,282
Ընդհանուր ուսանողական համակազմը	18212	16425	17912	18139	17933
Ծախսեր/ուսանող հարաբերակցությունը	405.6	453.3	470.4	531.5	655.2


2011-2014 թվականների ընթացքում եկամուտներ/ուսանող հարաբերակցությունն աճել է 33, իսկ ծախսեր/ուսանող հարաբերակցությունը 31 տոկոսով:



Ցուցանիշ 3.5. Դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին և տարեվերջին (իզ. դր.)

	2011	2012	2013	2014	2015
Տարեսկիզբ	1,322,608	1,074,501	997,847	1,026,482	1,685,565
Տարեվերջ	1,074,501	997,847	1,026,482	1,685,565	2,777,034


2015 թվականին 2011-ի համեմատ՝ տարեսկզբին դրամական միջոցների մնացորդն աճել է շուրջ 27%-ով, իսկ տարեվերջինը՝ երեք անգամ և կազմում է գրեթե 2,7 մլրդ դրամ (մնան աճը պայմանավորված է արդեն իսկ նշված պատճառով, տե՛ս աղյուսակ 3.3):



Ցուցանիշ 3.6. ՀՀ պետական բյուջեից ստացված եկամուտների և ոչ պետական պատվերով եկամուտների հարաբերությունը ընդհանուր եկամուտներին (իզ. դր.)

	2011	2012	2013	2014	2015
